«Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ» ծրագրի շրջանակներում « տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող միջոցառումների վերաբերյալ

(հունվար-հունիս 2026թ.)

## 1. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի (ԿԱՊԿ, ԿՁԱՊԿ) գնահատում

2026թ առաջին կիսամյակում «Վաղարշապատի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ը շարունակել է իրականացնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների գնահատման, մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մատուցման, մասնագիտական կարողությունների զարգացման, խորհրդատվական աջակցության, մշտադիտարկման և համագործակցության լայնածավալ աշխատանքներ:

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի մասնագետների կողմից իրականացվել է ընդհանուր թվով 107 երեխայի 87 տղա և 20 աղջիկ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումներ, որից

- ուսումնական հաստատություններում 78 երեխա՝ 64 տղա 14 աղջիկ
- ՆՈՒՀ-ում 26 երեխա՝ 20 տղա 6 աղջիկ

ՏՄԱԿ-ում 3 երեխա՝ 3 տղա

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնական հաստատություններում գնահատումների թիվը նախատեսվածից ավել է ստացվել, քանի որ իրականացվել են գնահատումներ այն երեխաների շրջանակում՝ ում կրթական աստիճանը փոփոխվել է:

## 2. Մանկավարժահոգեբանական ծառայությունների մատուցում

Հունվար-հունիս ամիսների ընթացքում Վաղարշապատի ՏՄԱԿ-ի մասնագետների կողմից շարունակաբար տրամադրվել են մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ ինչպես հանրակրթական, այնպես էլ նախադպրոցական ուսումնական հաստատություններում:

Վաղարշապատի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կողմից մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ են տրամադրվել 461 երեխաների 340 տղա 121 աղջիկ, որից՝

- Հանրակրթական ուսումնական հաստատություններում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ է տրամադրվել 385 աշակերտի՝ 284 տղա, 101 աղջիկ.
- Ուսումնական հաստատությունների հոգեբանների կողմից ևս մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ են տրամադրվել:
- Վաղարշապատի ՏՄԱԿ-ի մասնագետների կողմից մանկավարժահոգեբանական

աջակցության ծառայություններ է տրամադրվել նախադպրոցական տարիքի 76 սանի՝ 56 տղա, 20 աղջիկ:

Հաշվետու ժամանակահատվածում ՏՄԱԿ-ի տնօրենի և տնօրենի տեղակալի կողմից այցեր և հանդիպումներ են իրականացվել Վաղարշապատի ՏՄԱԿ-ի կողմից սպասարկվող դպրոցներում և ՆՈՒՀ-ում:

### 3. Կարողությունների զարգացում/ վերապատրաստումներ

2026թ.-ի հունվար-հունիս ամիսների ընթացքում ՏՄԱԿ-ի <<Վերապատրաստման և մեթոդական աջակցության>> բաժնի մասնագետների,ինչպես նաև կենտրոնի տնօրենի կողմից անցկացվել են վերապատրաստումներ Վաղարշապատի տարածաշրջանի ուսումնական հաստատությունների /Դպրոց-ՆՈՒՀ-ՄԿՈՒ/ վարչական անձնակազմի, դասախոսների, բազմամասնագիտական թիմի, ուսուցիչների, ուսուցչի օգնականների, դաստիարակների համար: Վերապատրաստումներին մասնակցել են ընդհանուր թվով 1478 անձ: Իրականացրած վերապատրաստումների թեմաներն են՝

| ՀՀ | Վերապատրաստման թեմա | Վերապատրաստման մասնակից անձանց թիվ |
|---|---|---|
| 1 | «0-6 տարեկան երեխաների կրթության և զարգացման կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգ» | 34 |
| 2 | ԱՈՒԶՊ-ի մշակում և վարում | 8 |
| 3 | Երեխաների հանդեպ բռնության կանխարգելում և արձագանքում | 13 |
| 4 | Կրթության միջոցներ.մատչելիություն և խելամիտ հարմարեցումներ | 1062 |
| 5 | Ապահով և անվտանգ կրթական միջավայր | 55 |

| | | |
|---|---|---|
| 6 | Ուսումնական հաստատություններում երեխաների պաշտպանության, հոգեսոցիալական աջակցության և հոգեկան առողջության դեպքերի արձագանքման և ուղղորդման մեխանիզմներ | 266 |
| 7 | Հանրակրթական ուսումնական հաստատության հոգեբանի դերը և գործառույթները | 40 |

Իրականացրած վերապատրաստումների, ինչպես նաև մասնակցած անձանց թիվը պլանավորած թվին չի համապատասխանում պայմանավորված ՀՄԿ-ի կողմից առաջնահերթություն տրված մուդուլային վերապատրաստումների տրմամբ, որը պետք է իրականացվեր,սակայն հետաձգվել է 3-րդ և 4-րդ եռամսյակում իրականացնելու պայմանով: Այդ իսկ պատճառով չեղարկվել են պլանավորված վերապատրաստումները:

**4.Խորհրդատվություն**

Հաշվետու ժամանակահատվածում Վաղարշապատի տարածաշրջանի սպասարկվող դպրոցներում և ՆՈՒՀ-ում ՏՄԱԿ-ի տնօրենի, տնօրենի տեղակալի, ինչպես նաև մասնագետների կողմից բազմաթիվ խորհրդատվություններ են տրամադրվել հաստատությունների վարչական անձնակազմի, մասնագետների, ուսուցիչների, ուսուցչի օգնականների, ծնողների, դաստիարակների համար:

Խորհրդատվությունները իրականացվել են հիմնականում հետևյալ թեմաների շուրջ.

➤ ԱՈՒԶՊ-ի արձանագրության լրացման հետ կապված քննարկում

➤ ԱՈՒԶՊ-ի նպատակների քննարկում

➤ ԿԱՊԿ ունեցող աշակերտների առկա մակարդակի քննարկում

➤ Անհատական ուսուցման պլանի գնահատման արձանագրության լրացման հետ կապված քննարկում

➤ ԱՈՒՊ-ի նպատակների քննարկում

➤Ներառական կրթությունը ՆՈՒՀ-ում

➤Խելամիտ հարմարեցումների հետ կապված խորհրդատվություն

➤Տարեվերջյան արդյունքների քննարկում,արձանագրությունների կազմում

➤ԵՊԹ-ի աշխատանքների քննարկում

Իրականացրած խորհրդատվություններին մասնակցել են թվով 1226 անձ:

Մասնակիցների թիվը նախատեսվածից ավել է ստացվել պայմանավորված ՏՄԱԿ-ում և ուսումնական հաստատություններում նոր մասնագետների համալրմամբ, ինչպես նաև ԱՈՒՊ-ի և ԱՈՒԶՊ-ի գնահատման արձանագրության լրացման հետ կապված:

### 5. Մշտադիտարկում

Հաշվետու ժամանակահատվածում ՏՄԱԿ-ի տնօրենի, տնօրենի տեղակալի, գնահատման բաժնի համակարգողի կողմից իրականացվել են մշտադիտարկումներ:Իրականացվել են թվով 101 մշտադիտարկումներ:

Մշտադիտարկումների շրջանակում ուսումնասիրվել են դպրոց-մանկապարտեզ-ծնող–ուսուցիչ–դաստիարակ համագործակցության արդյունավետությունը, կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման գործընթացը, մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների կազմակերպումը և ուսումնական գործընթացի ներառականության մակարդակը:

Յուրաքանչյուր մշտադիտարկման արդյունքում իրականացվել են քննարկումներ և տրվել մասնագիտական առաջարկություններ՝ արձանագրված բացթողումների և խնդիրների հաղթահարման ուղղությամբ: Արդյունքները փաստաթղթավորվել են համապատասխան արձանագրություններով:

Բացի այդ, իրականացվել են մոնիթորինգային այցեր սպասարկվող բոլոր դպրոցներում և նախադպրոցական ուսումնական հաստատություններում, որոնց ընթացքում ուսումնասիրվել են երեխաների անհատական թղթապանակները, ԱՈՒՊ-ների և ԱՈՒԶՊ-ների մշակման ու վարման գործընթացները:

### 6. Համագործակցություն

Հաշվետու ժամանակահատվածում Վաղարշապատի ՏՄԱԿ-ը իր գործունեությունն ծավալել է համագործակցելով մի շարք կառույցների հետ:
Համագործակցել է՝

- Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի
- Յուրեցյանի անվան ՔՈԱՖ-ի
- Վաղարշապատ համայնքի կրթության և մշակույթի բաժնի
- Դպրոցների տնօրենների
- ՆՈՒՀ-երի տնօրենների հետ

Վերոնշյալ կառույցների համագործակցության հիմնական նպատակն է եղել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների գնահատումների, մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների, վերապատրաստումների ճիշտ և արդյունավետ կազմակերպան գործընթացները կազմակերպելու և իրականացնելու շուրջ:

Համագործակցային աշխատանքները կրում են շարունակական բնույթ ՏՄԱԿ-ի

աշխատանքները արդյունավետ կազմակերպելու համար:

Կենտրոնի անվանումը՝ <<Վաղարշապատի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն>> ՊՈԱԿ

Տնօրեն՝ Գ.Յարությունյան

(ստորագրություն) (անուն, ազգանուն)

Կ.Տ.

«01» «07»2026թ.